# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 33

«12» 04 2018 թ. գ. Երևան

## ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԵՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԶԵՆՔԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 88 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասին պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

**Հրամայում եմ՝**

1. Սահմանել ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ Լ.Բաղդասարյանին՝ կատարել սույն հրամանի հավելվածի 27-րդ կետով նախատեսված ստուգում և դրա արդյունքում կազմված ակտը մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանելու մասին» N 88 հրամանը:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

**Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 12-ի
N 33 հրամանի

# ԿԱՐԳ

## ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԵՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԶԵՆՔԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության դատախազությունում (այսուհետ՝ դատախազություն) ծառայողական հաշվեցուցակային զենքը (այսուհետ՝ զենք) և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը, ինչպես նաև դրանից բխող այլ հարաբերություններ:

2. Դատախազներին զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է կառավարության լիազորած մարմինը:

3. Ծառայողական զենք է համարվում «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված այն զենքը, որը նախատեսված է պետական մարմինների պաշտոնատար անձանց, այդ թվում դատախազների օգտագործման համար:

4. Դատախազը պատասխանատու է իրեն հատկացված զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահպանության ու հաշվառումն ապահովելու համար:

## II. ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԶԵՆՔ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼԸ

5. Դատախազների զենք պահելու և կրելու թույլտվություն ստանալու վերաբերյալ աշխատանքները իրականացվում են Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի (այսուհետ՝ առաջին բաժին) կողմից՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին (այսուհետ՝ գլխավոր դատախազ) հասցեագրված համապատասխան դիմումի հիման վրա:

6. Դատախազներին զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ հատկացվում են գլխավոր դատախազի հրամանով՝ հատուկ պատրաստություն անցնելուց և զենք պահելու ու կրելու թույլտվություն ստանալուց հետո:

7. Դատախազները պարտավոր են պարբերաբար անցնել հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու՝ իրենց պիտանիությունը որոշող ստուգումներ: Դատախազների հատուկ պատրաստությունն իրականացվում է համապատասխան պետական մարմնի կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Հատուկ

պատրաստության ծրագիրը և ստուգումներ անցկացնելու կարգը սահմանում է լիազոր մարմինը:

8. Դատախազին տրամադրված զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցներն առաջին բաժնի կողմից հաշվառվում և գրանցվում են համապատասխան մատյաններում:

9. Դատախազությունում առկա զենքն ու անձնական պաշտպանության հատուկ միջոցները ենթակա են հաշվառման: Զենքի և փամփուշների հաշվառումը կատարվում է ելքի-մուտքի փաստաթղթերով (կարգագրերով, ապրանքագրերով, քարտերով, ամփոփագրերով, ակտերով և այլն), ցուցակագրով, զենքի ու փամփուշտների հաշվառման մատյաններով:

Թույլատրվում է հաշվառում կատարել համակարգիչների միջոցով՝ պարտադիր պայմանով, որ տվյալներն ամեն օր մուտքագրվեն մագնիսային և թղթային կրիչների վրա՝ արտացոլելով զենքի և փամփուշտների յուրաքանչյուր տեղաշարժ:

10. Հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործավարության պահանջներին համապատասխան, հաշվառման ցուցակագրերում, գրանցման մատյաններում գրառումները կատարելով ելքի ու մուտքի իսկական և կատարված փաստաթղթերի հիման վրա:

11. Հաշվառման ցուցակագրերը, գրանցման մատյանները, ինչպես նաև՝ ավտոմատացված հաշվառման համար նախատեսված ձևաթղթերն օգտագործելուց առաջ ենթակա են պարտադիր գրանցման՝ համաձայն սահմանված կարգի: Մատյանների թերթերը համարակալվում, կարվում և կնքվում են համապատասխան պետական մարմնի կնիքով:

12. Հաշվառման փաստաթղթերը կազմվում են պարզ, հասկանալի և առանց ջնջումների: Սխալ գրանցումները չեղյալ են համարվում վրան գիծ քաշելու միջոցով, որպեսզի նախկին գրառումներն ընթեռնելի լինեն, ապա կատարվում է ճիշտ գրառումը: Բոլոր ճշտումները ստորագրությամբ հաստատում է պատասխանատու անձը:

13. Լրացված հաշվառման փաստաթղթի էջի բաց թողնված մասը զիգզագաձև գծվում է, որպեսզի պատասխանատու անձի ստորագրությունից առաջ հնարավոր չլինի նոր գրառումներ կատարել:

14. Բոլոր գրառումները հաշվառման գրքում կատարվում են իրական փաստաթղթերի հիման վրա: Մեծաքանակ զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների ընդունման և հանձնման ժամանակ թույլատրվում է հաշվառման գրքերում գրառումները կատարել ամփոփագրի հիման վրա, որը ներկայացվում է որպես մեկ փաստաթուղթ:

15. Յուրաքանչյուր տարվա 1-ին աշխատանքային օրը կամ գույքագրման օրը հաշվառման գրքերում կատարվում է ամփոփում, որի արդյունքները հաստատվում են առաջին բաժնի պետի ստորագրությամբ: Նույնը արվում է նոր հաշվառման գիրք բացելիս:

16. Նոր գրքերի բացումը կատարվում է գույքագրման տվյալների հիման վրա կամ հին գրքերի մնացորդները տեղափոխելով նորերի մեջ:

17. Զենքի հաշվառման ցուցակագրերը, գրանցման մատյանները, հաշվառման փաստաթղթերով գործերը դրանց ավարտից հետո առաջին բաժնի կողմից հանձնվում են դատախազության արխիվ:

18. Հաշվառման փաստաթղթերով գործերը, ցուցակագրերը, գրանցման մատյանները ոչնչացվում են 10 տարի պահելուց հետո:

19. Զենքի հաշվառման փաստաթղթերում նշվում է դրա տեսակը, ձևը, մոդելը, տրամաչափը, իսկ փամփուշտների դեպքում՝ նաև քանակը և արտադրության խմբաքանակի համարը:

20. Առաջին բաժնի կողմից դատախազներին զենքի և փամփուշտների տրամադրումն իրականացվում է ընդունման-հանձնման մատյանում համապատասխան գրանցում կատարելուց հետո՝ այն անձի ստորագրությամբ, ում ամրացված է զենքը:

21. Դատախազությունում զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պետք է՝ պահվեն սահմանված քանակով և օգտագործվեն միայն ըստ անհրաժեշտության, իսկ զենքից նմուշառված գնդակներն ու պարկուճները՝ հաշվառված լինեն հանրապետական գնդակապարկուճային հաշվառման քարտադարանում:

22. Զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների տեղափոխումը պահպանման վայրից մեկ այլ վայր կատարվում է գլխավոր դատախազի թույլտվությամբ:

23. Զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների փոխադրումը կատարվում է զինված ուղեկալի միջոցով՝ հատուկ այդ նպատակի համար նախատեսված արկղերով:

24. Ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ օգտագործված փամփուշտները պատասխանատու անձի կողմից հաշվառումից հանվում են՝ հիմք ընդունելով այդ մասին ներկայացված համապատասխան զեկուցագիրը:

25. Հաստատված չափաքանակով զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները դատախազին տրամադրվում են դատախազությունում ծառայելու ընթացքում: Պաշտոնից ազատվելու դեպքում դատախազը պարտավոր է իրեն տրամադրված զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները հանձնել առաջին բաժին:

## III. ԶԵՆՔԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԻ, ՊԱԿԱՍՈՐԴԻ ՈՒ ՓՉԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

26. Զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների առկայությունը, դրանց պահպանության կազմակերպումը և հաշվառումը դատախազությունում ստուգվում են՝

1) եռամսյակը մեկ անգամ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը՝ առաջին բաժնի կողմից,

2) գույքագրման ժամանակ:

27. Յուրաքանչյուր եռամսյակ դատախազությունում անցկացվում է փաստացի առկա զենքի և փամփուշտների համեմատում ցուցակագրերի, մատյանների և այլ հաշվառման փաստաթղթերի հաշվառման տվյալների հետ:

Համեմատական ստուգում անցկացնելուց առաջ զենքի ու փամփուշտների ցուցակագրերում և հաշվառման մատյաններում կատարվում է ամփոփում, որը հաստատվում է առաջին բաժնի պետի կողմից:

Համեմատական ստուգման ժամանակ տարբերության բացակայության դեպքում, զենքի և փամփուշտների հաշվառման մատյանում կատարվում է հետևյալ բովանդակությամբ գրառում. «Անցկացվել է համեմատական ստուգում, տարբերություններ չեն հայտնաբերվել», նշվում է անցկացման ամիսը, ամսաթիվը և հաստատվում է ստուգում կատարած անձանց ստորագրություններով:

28. Զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների առկայությունը հաստատվում է միայն դրա պահպանության համար պատասխանատու անձի ներկայությամբ, կատարելով պարտադիր հատային, համալիր և ըստ համարների հաշվառում, ինչպես նաև ստուգվում է զենքի համապատասխանությունը տեխնիկական փաստաթղթերին:

29. Ստուգման ընթացքում հայտնաբերված թերությունների մասին նշումները կատարվում են զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների ստուգման գրքում և միջոցներ են ձեռնարկվում թերությունները վերացնելու ուղղությամբ:

30. Ստուգումների արդյունքներով կազմվում է համապատասխան ակտ:

31. Հայտնաբերված անսարք զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները ենթակա են վերանորոգման, իսկ ոչ պիտանիները՝ փոխարինման:

32. Փաստացի առկա և հաշվառման գրքերում հաշվառված զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների քանակների միջև եղած անհամապատասխանությունը համարվում է պակասորդ կամ ավելցուկ:

33. Դատախազությունում զենքի և փամփուշտների ավելցուկ կամ պակասորդ հայտնաբերելու դեպքում առաջին բաժինը այդ մասին տեղեկացնում է համապատասխան պետական մարմնին և նշանակվում է գույքագրում, որի ընթացքում բացահայտվում են զենքի հաշվառման տվյալների անհամապատասխանության պատճառներն ու պայմանները և դրանց հաշվառման կարգը խախտող մեղավոր անձինք:

Հաշվառումից դուրս մնացած զենքը և փամփուշտները մեկ օրվա ընթացքում ենթակա են հանձնման համապատասխան պետական մարմնին:

34. Գույքագրումը առկա զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների լիակատար ստուգումն է՝ համաձայն հաշվառման տվյալների և հաշվառման ու պահպանության ապահովման կարգի: Գույքագրում իրականացվում է հիմք ընդունելով գլխավոր դատախազի հրամանը:

Գույքագրումն իրականացնում է գլխավոր դատախազի հրամանով ստեղծված հանձնաժողովը:

35. Գույքագրում կատարվում է՝

ա) ամեն տարի (հունվարի 15-ի դրությամբ),

բ) զենքի և փամփուշտների պահպանության պատասխանատու անձի կամ գլխավոր դատախազի փոփոխության դեպքում (գործերը հանձնել-ընդունելու օրը),

գ) գլխավոր դատախազի հանձնարարությամբ,

դ) բնական և տեխնածին աղետի, հրդեհի, վթարի կամ այլ արտակարգ իրավիճակների դեպքում, որոնց հետևանքով կատարվել է զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների տեղափոխություն:

36. Գույքագրման հանձնաժողովում ընդգրկվում են երեքից ոչ պակաս անձինք:

37. Դատախազությանը տրամադրված զենքի և փամփուշտների հափշտակման կամ կորստի դեպքում անհապաղ տեղեկացվում է գլխավոր դատախազին և համապատասխան պետական մարմիններին՝ ըստ դրանց հաշվառման վայրի: Դատախազության և համապատասխան պետական մարմնի կողմից համատեղ կատարվում է ստուգում, որի արդյունքներով որոշում է կայացվում զենքը և փամփուշտները հաշվառումից հանելու մասին՝ կազմելով դուրսգրման ակտ:

38. Շահագործման ընթացքում մաշված և ոչ պիտանի դարձած զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները դուրս են գրվում դատախազության հաշվառումից՝ համապատասխան փաստաթղթերի ձևակերպմամբ:

39. Ոչ պիտանի դարձած զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները դատախազության հաշվեկշռից հանելու համար, կազմվում է հիմնավորված եզրակացություն, որը հաստատում է գլխավոր դատախազը:

## IV. ԶԵՆՔԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

40. Զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների պահասենյակի համար գլխավոր դատախազությունում հատկացվում է չոր և լուսավոր սենյակ, որը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահպանության պահանջներին և հակահրդեհային անվտանգությանը: Պահասենյակների դռները պետք է լինեն կրկնակի (ներսի դռները՝ երկաթյա ցանցից), ամուր փականներով: Դրսի դուռը պետք է լինի երկաթյա: Պահասենյակները պետք է ունենան բնական օդափոխություն, ապահովված լինեն ջրով և ձայնային ազդանշանով:

41. Էլեկտրական լուսավորում թույլատրվում է բոլոր պահասենյակներում:

42. Զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները շարվում են այնպես, որ դրանք չթափվեն: Զենքի հետ համատեղ թույլատրվում է պահել փամփուշտներ՝ տուփերով, պահեստատուփերով կամ պահունակներով:

Ծառայողական զենքը սենյակում պահվում է լիցքաթափված, առանձին՝ ըստ մոդելների և տեսակների, պահունակների հետ միասին:

43. Այն զենքերը և հատուկ միջոցները, որոնք հատկացված չեն դատախազներին, պահվում են առանձին պահարաններում: Զենքերն անհրաժեշտ է միշտ պահել սարքին վիճակում:

44. Զենք ստացող դատախազը պետք է գիտելիքներ ունենա զենքի կառուցվածքի մասին, կարողանա այն քանդել, հավաքել և յուղել:

45. Չի թույլատրվում կատարել զենքի կառուցվածքի փոփոխություն, այն դիտվում է որպես զենքի փչացում:

46. Հակագազերը պահվում են կոմպլեկտավորված, հատուկ չոր արկղերում: Հակագազերի պահեստային մասերը պահվում են առանձին արկղերում: Հակագազերի պայուսակները թույլատրվում է պահել դարակների վրա:

47. Հակաքիմիական պաշտպանության միջոցները (պաշտպանիչ կոստյում, թիկնոց, գուլպա, գոգնոց, երկարաճիտ կոշիկ, ձեռնոց) պահվում են պահեստի չոր, չլուսավորվող սենյակում՝ գործարանային արկղերում:

## V. ԶԵՆՔԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼԸ ԵՎ ԿՐԵԼԸ

48. Դատախազին հատկացված զենքը և հատուկ միջոցները կրելու, պահելու սույն կարգը գործում է այն պահից, երբ ստացվում է գլխավոր դատախազի համապատասխան հրամանը և զենք պահելու և օգտագործելու վերաբերյալ թույլտվությունը:

49. Զենք կրելիս դատախազը պարտավոր է իր մոտ ունենալ համապատասխան թույլտվություն և ծառայողական վկայական:

50. Զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ կրելու և պահելու իրավունք ունեցող դատախազը պարտավոր է պահպանել դրա հետ անվտանգ վարվելու կանոնները:

51. Զենքը և հատուկ միջոցները պահվում են դրանց ամբողջականությունը, անվտանգությունը ապահովող և կողմնակի անձանց հասանելիությունը բացառող պայմաններում՝ փականով փակվող մետաղյա կամ չհրկիզվող պահարաններում:

52. Հիվանդանոցում գտնվելու, արձակուրդ կամ հանրապետության սահմաններից դուրս մեկնելուց առաջ (հոիության ընթացքում), դատախազը զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները կարող է հանձնել պահպանության՝ առաջին բաժին:

53. Եթե հանրապետությունից դուրս գործուղման մեկնող դատախազի հրամանում նշվում է զենքով գործուղվելու մասին, ապա զենքի փոխադրման գործընթացը կարգավորվում է «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

54. Զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները տանը պահվում են դրանց ապահովությունը, անվտանգությունն ապահովող, կողմնակի անձանց հասանելիությունը բացառող պայմաններում (չհրկիզվող պահարանում):

55. Զենքը և պահունակը անհրաժեշտ է պահել իրարից առանձնացված, փափշտակալը դատարկ վիճակում:

56. Դատախազն աշխատավայրում զենքը պետք է պահի երկաթյա պահարանում: Իր գործընկերների կամ վերադաս դատախազների մոտ պարտավոր է մտնել առանց զենքի և հատուկ միջոցների:

57. Գլխավոր դատախազի մոտ ընդունելության ժամանակ դատախազն իր մոտ գտնվող հաշվեցուցակային զենքը հանձնում է համապատասխան պատասխանատու անձին՝ հատուկ պահարանում պահելու:

## VI. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՆՔԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

58. Դատախազությունում հաշվեցուցակային զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների պահպանության նկատմամբ հսկողությունն իրականացնում է առաջին բաժինը:

59. Առաջին բաժինն իրեն վերապահված լիազորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

1) ստուգում է դատախազին հատկացված զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու պայմանները,

2) անցկացնում է զենքի և անձնական պաշտպանության հատուկ միջոցների զննություն, հաշվառում և տարեկան գույքագրում,

3) սահմանված կարգի խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ միջոցներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ՝ այդ մասին զեկուցելով գլխավոր դատախազին,

4) իրականացնում է իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ: